

արեան գնտիկները հաւասար մեծու-
թիւն չունին . մարդունը այնչափ
մանր են, որ իրեք հարիւրը քովէքով
դնելով հազիւ մէկ հազարամեթր եր-
կայնք կունենան :

Դարձեալ, ան կենդանեաց արեան
գնտակն որ ուրիշներէն աւելի շատ է,
իրենց արեան կամ մարմնոյն տաքու-
թիւնն ալ մէկալնոնցմէ աւելի է :
() րինակի համար հոս դնենք զանա-
զան կենդանեաց ջերմութիւնը՝ հա-
րիւր աստիճան բաժնած ջերմաչափի
վրայ առնելով .

Աքաղաղ	43°
Վառեակ	42°
Հնդկահաւ	42°
Բադ	41°
Ձկնկուլ	41°
Մարդ	39°
Կապիկ	39°
Վագր	37°
Շուն	39°
Չափալ	38°
Կատու	38°
Ձի	37°
Ոչխար	39°
Այծ	40°
Եղ	39°
Խոզ	40°
Փիղ	37°
Նապաստակ	38°
Օձ	31°
Գորտ	28°
Թռչող ձուկ	25°
Կարիճ	25°
Բզէզ	5°

Եւ ցուցակէն կրտեսնուի որ կեն-
դանեաց մէջ աւելի տաք եղածները
թռչուններն են, ետքը մսակերները,
ետքը խոտակերները, և էն ետքն ալ
պաղարիւն կենդանիները . և իրենց
արեան գնտակներն ալ աս կարգով
իրարմէ աւելի կամ պակաս են :

Արեան վրայ հիմա այսչափ ընդ-
հանուր տեղեկութիւն տալէն ետքը,
ուրիշ անգամ աւելի կրթացատրենք
մէկքանի յատկութիւնները՝ երբոր
շնչառութեան վրայ խօսինք :

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Բառ :

ԲՈՒՒՆ տգեղ տեսքին համեմատ
է նաև իր անախորժ ձայնը . բայց ոչ
տեսքը և ոչ ձայնը այնչափ ատելի
կըլլար մարդկանց, թէ որ աւելորդա-
պաշտութեան վախը և սոսկումը չու-
նենային աս թռչունին ձայնէն : 1) ասն
զի հին ատենէն ՚ի վեր, ու գրեթէ ա-
մէն երկիր ու ամէն ազգաց մէջ տի-
րած է աս աւելորդապաշտութիւնը,
թէ որ տանը վրայ որ բու մը գայ
կենայ ու իր ողբական ձայնով կանչէ,
ան տանը մէջ մահ կրպատահի : Եւ
կարծիքին ստույթիւնը իմանալու հա-
մար բաւական է միայն մտածելը թէ
մեր սուրբ հաւատքն ալ և բնական
խելքն ալ կը ցուցնեն թէ ըլլալու բա-
ներուն գիտութիւնը Եւստուծոյ միայն
պահուած է . իսկ թէ որ Եւստուծոյ
երբեմն ոմանց մարդարէութե կամ
գուշակութեան շնորհք տուեր է,
միշտ մարդկանց օգտին համար տը-
լած է հրաշքով՝ իմ բնական օրէնքէն
վեր կերպով մը . ուստի բուին պէս
խելճողորմելի թռչունը չէ որ, և ոչ
մէկ արարած մը կրնայ գուշակել
մարդուս գլխուն գալիքը, կամ աշ-
խարհքիս վրայ ըլլալու բաները : Եւս-
պիսի նախապաշարմունքներու վրայ
տեղնիտեղը խօսիլը ուրիշ անգամի
ձգելով, հոս բուին համառօտ ստու-
րագրութիւնը ընենք :

Բուն գիշերային թռչուն մըն է
գիշատիչ՝ որ գրեթէ ամէն երկիր կը-
գտնուի : Եւ որ աչքին բիւրերը խիստ
մեծ են, և ուզած ատենը կը ձեռն
կամփոփէ զանոնք : Բունն այլևայլ
տեսակներուն մէջ շատը կայ որ ցո-
րեկուան լոյսը չուզեր տեսնել, վասն
զի սաստիկ լոյսէն աչքը կ'առնուի .
անոր համար արշալուսի ատեն ու
իրիկուան դէմ որսի կելլէ, և կամ



ԲԱՆՈՒ

լուսնկայ եղած գիշերը : Թի որ ցուրեկը արևու մէջ դրուի, այլանդակ ու ծիծաղական կերպերով աչուընէրը, գլուխը, վիզը և այլևայլ անգամները կը շարժէ, որով կիմացընէ թէ արևուն լոյսէն չախորժիր . բայց կան տեսակներ ալ որ արևէն ամենևին չեն նեղիր, ու ցորեկ ատեն ամէն բան պայծաւ կը տեսնեն, ու ցորեկով ալ որսի կելեն : Ինդհանրապէս բուերուն փետուրները խիստ բարակ ու կակուղ են . ուստի թռչելու ատեն նին ամենևին ձայն չելեր, անով յանկարծակի մանր կենդանեաց վրայ կը լարձըկին ու կը սպաննեն : Իրենց խռչափողը՝ լայն, կոկորդին ծակը մեծ

1 ԳԵՐԻԲԻՔԻ :

և ստամոքսը խիստ ջղոտ ըլլալով, կրնան որսին միտ դիւրաւ կլլել ու մէկ քանի ոսկորները մարսել . բայց մորթը, թրուշուններուն փետուրները, ու բուսական նիւթերը կը լլելէն ետե՛ կծիկի պէս նորէն ետ կուտան : Բուին երկու կտուցներն ալ շարժուն է, ասոնք մէկմէկու կը զարնէ, ու ձայն կը հանէ . և աս զարները շատ անգամ իրեն տժգոհութեանն ու բարկութեանը նշան է :

Շատ տեսակ է բուն . հոս դրած նիս հասարակ տեսակին պատկերն է : Երկայ սովորաբար աշտարակներու ու ցորեննոցներու մէջ պահուլտած կը կենայ . քոյնը կը շինէ հին պատերու ծակերուն մէջ, երբեմն ալ ծառի փո-

րուածքներու մէջ: Չագերը առջի բերան երկայն՝ փափուկ ու ճերմակ փետուրներ կունենան: Արբոր մէկը բուին քովը մօտենայ, կըսկսի խրուկալու պէս ձայն հանել. քանի որ պըզտիկ է՝ դիւրաւ կընտանենայ, և բաւական մեծնալէն ետքը՝ իր երկայնուծիւնը մէկ ոտնաչափէն աւելի կըլլայ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲԱՂԱՔԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

Բնատան:

Բնատանութիւնը մարդուս կարօտութեանը հետ մէկտեղ սկսած է, քիչ ան ատենէն ի վեր՝ որ Բնատուած տեսնելով մարդուս իրեն դէմ ըրած ապերախտութիւնը ըսաւ, «Բնատմբք երեսաց քոց կերիցես զհաց քո»: Եւ իրաւ որ ան ատենէն ետքը մարդս մարմնաւոր թշուառութենէ միայն իր աշխատանքովը կըրնայ ազատիլ: Թի որ աշխատանքը առանձին մարդկանց ալ հարկաւոր է, հապա որչափ աւելի մէկտեղ եկած, ժողովուրդ՝ քաղաք ձևացած ընկերական մարդկանց:

Ինչայն թէ նախ՝ Բնատուած մարդուս պատիժ դրած ատենը՝ իրաւ է որ աշխատանք տուաւ իրեն, բայց թշուառութիւն չտուաւ. ուստի չառաւ անոր ձեռքէն դիւրութիւնը, հարստութիւնն ու հանգստութիւնը, որովհետեւ աս բաներս աշխատանքի ու առաքինութեան պտուղներն են:

Արկորդ, մէկը աշխատանքով հարստութիւն դիզելէն ետքը՝ իրաւունք չունենար բոլորովին աշխատանքէ դադրելու: Բնատուած պէտք է որ նախատես եղած ըլլայ թէ քանի որ մարդիկ շատնան՝ նոր նոր աշխատանքներ պիտի աւելնան, որով մէկը հարուստ՝ մէկալը ազգատ ըլ-

լալով, նոր նոր առաքինութիւններ ալ պիտի ծաղկին մարդկանց մէջ, որոնց առջինը կրնայ սեպուիլ սերն ու ողորմութիւնը: Ուստի կրնանք ըսել թէ Բնատուած աս աշխատութե պատիժը դնելով ալ՝ աւելի բարիք մը ուզեր է ընել մարդկանց: Աշխատութիւններուն մէջ գլխաւորներէն մէկն ալ մտքին աշխատութիւնն է. ասիկայ աւելի անոնց համար է որ մեքենական կամ արհեստական կեանքի այնչափ չեն դիմանար, և Բնատուած իրենց աւելի բարձր հանձար մը՝ միտք մը տուեր է: Բնոր համար, ան մարդն որ իր աշխատանքովը հարստացեր է, կամ իր պապերէն աղէկ ժառանգութիւն ունեցեր է, կամ աւելի իր խելք բանեցընելով նիւթական աշխատութենէ ազատ մնացեր է, բոլորովին ամէն աշխատանքէ դուրս չէ, հապա մտքով աշխատողներուն կամ ընկերութեան պահապանը ըսուողներուն կարգը կըմտնէ: Եւ աս կերպով ան մարդուն աշխատանքը ոչ եթէ կը պակսի, հապա առջինին վրայ աւելի ազնուութիւն մը կառնէ: Հարուստ մարդու մը համար մէյմէկ ազնիւ աշխատանքներ են՝ իրեն ունեցածները լաւ կառավարելը, զանոնք աղէկ բաներու գործածելը, իր ժամանակը բարի բաներու անցընելը, և մանաւանդ բարեգործութեան ետեւէ ըլլալը. վասն զի աս բաներովս Բնատուածը հրամանին կըհնազանդի, և իրեն աստիճանին ընկած ծառայութիւնը կրնէ մարդկային ընկերութեան մէջ:

Բն երկու տեսակ աշխատութիւնները, քիչ նիւթական ու մտաւոր աշխատանքը, շատ յարմար են մարդուս բնական կազմութեանը, որ մտաւոր հոգիէ ու նիւթական մարմինէ բաղադրուած է. ուստի մէկ կողմէն նիւթական աշխատանքով իրեն նիւթական մասին՝ քիչ մարմնոյն կարօտութիւնը կըլեցընէ, մտաւոր աշխատանքով ալ իր հոգին կամաց կամաց աւելի կըլուսաւորուի ու իրեն սկըզ-